



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ  
11.10.2023թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 25 անդամները:  
Բացակայում են ավագանու անդամներ Լիլիթ Հարոյանը և Գարիկ Պալյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

**Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Զիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալբաբյանը, Ա.Զաքարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

**Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:**

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի ավագանու «Միասնական համայնք դաշինք» խմբակցության անդամ Արսեն Խլղաթյանի դիմումը՝ ավագանու անդամության լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ: Նշվեց, որ դիմումին տրվել է ընթացք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին համապատասխան: 10.10.2023թ. թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի N4 արձանագրության համաձայն՝ լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած Արսեն Խլղաթյանի ավագանու մանդատը տրվում է ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Վալերի Մուքայեյանին:

Այս փոփոխություններով պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել օրակարգում ավելացնել ևս մեկ նախագիծ՝ Չարենցավան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Ս. Մուրադյանը ներկայացրեց նաև, որ «Ապրելու երկիր» խմբակցություն կողմից առաջարկված «Հանրային տարածքների ֆունկցիոնալ նշանակության վերականգնման և պաշտպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» նախագիծը ավագանու մշտական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն չի ստացել, այդ պատճառով հանվում է օրակարգից: Օրակարգային մյուս հարցերի վերաբերյալ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովները տվել են դրական եզրակացություններ/կցվում է/: